14.qxd 04/07/2026 20:00 Page 1

ԳԵՂԱՄԱ ՇԱՐԱՏԱՀ

Քաղաքական, հասարակական, մշակութային թերթ 3 հուլիսի 2026թ. թիվ 14 (642)

ԳԱՎԱՌԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ՆՇՎԵՑ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂԻ ՕՐԸ

Բուժաշխատողի օրվա շրջանակներում Գավառի Բժշկական կենտրոնը տոնական միջոցառմամբ հյուրընկալել էր առողջապահության ոլորտի ամենատարբեր ուղղությունների ներկայացուցիչների՝ մարզերից եւ մայրաքաղաքից: Միջոցառումը կազմակերպվել էր Գավառի բժշկական կենտրոնի եւ Գեղարքունիքի մարզային գրադարանի համատեղ նախաձեռնությամբ: Միջոցառմանն իրենց մասնակցությունն էին բերել ՀՀ Առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը, Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը, Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանը, Գեղարքունիքի մարզպետի եւ Գավառի համայնքապետարանի աշխատակազմերի ներկայացուցիչներ, պաշտոնական այլ անձինք:

Շնորհավորանքներին եւ բարեմաղթանքներին զուգահեռ անդրադարձ կատարվեց մեր երկրում առողջապահական համակարգի բարեփոխումներին, բուժաշխատողների մասնագիտական կարողությունների հզորացմանն ուղղված ծրագրերին ու ձեռքբերումներին:

-Այսօր առանձնահատուկ օր է, երբ մենք մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում այն մարդկանց, ովքեր իրենց մասնագիտական գիտելիքներով, մարդկային վերաբերմունքով եւ անձնվեր ծառայությամբ ամեն օր պահպանում են մարդկանց ամենաթանկ արժեքը՝ առողջությունը: Այս տոնական օրը ցանկանում եմ իմ խորին շնորհակալությունը հայտնել Գավառ ԲԿ բոլոր բժիշկներին, բուժքույրերին, վարչական անձնակազմին,-բացման խոսքում նշեց Գավառի ԲԿ տնօրեն Գարիկ Սողոմոնյանը:

-2026 թվականը Հայաստանի առողջապահական համակարգի համար նշանավորվեց առողջության համընդհանուր ապահովագրության համակարգի ներդրմամբ: Տարվա ընթացքում սպասվող բարեփոխման ծրագրերից ես կառանձնացնեի բժիշկների անհատական լիցենզավորման գործընթացը՝ որպես մասնագետին առաջադրվող պահանջների բարձրացման նոր փուլ: Ես վստահ եմ, որ ինչպես մինչեւ այս մեր բոլոր բարեփոխումները, սա էլ պատվով անցնելու ենք: Մենք շարունակելու ենք աշխատել ենթակառուցվածքների զարգացման վրա, եւ Գավառի բժշկական կենտրոնը դրա լավագույն օրինակն է: Ուրախ եմ, որ մարզում մենք բացելու ենք 3 ամբուլատորիաներ մինչեւ տարվա վերջ, եւ սա էլ կարեւոր նոր զարգացման շրջափուլ է մեզ համար բացելու: Շնորհավորում եմ բոլորիս, ցանկանում եմ բեղմնավոր աշխատանք, բայց ամենակարեւորը՝ առողջություն, սիրելի բժիշկներ,-ներկաներին դիմեց ՀՀ Առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը:

Ողջույնի եւ շնորհավորանքի խոսքով հանդես եկավ նաեւ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը:

-Ոչ մի ծրագիր, ոչ մի նոր տեխնոլոգիա եւ ոչ մի բարեփոխում չի կարող փոխարինել ձեր մասնագիտական գիտելիքին, սրտացավությանը եւ մարդասիրությանը: Դուք եք այն ուժը, որը առողջապահության համակարգին տալիս է իրական բովանդակություն եւ արժեք: Մաղթում եմ ձեզ ամուր առողջություն, մասնագիտական նոր հաջողություններ, խաղաղություն, բարեկեցություն եւ արժանի գնահատական ձեր պատասխանատու աշխատանքի դիմաց,-նշեց Կարեն Սարգսյանը:

Տոնական միջոցառումը շարունակվեց Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանի շնորհավորական ուղերձի ընթերցմամբ, համայնքապետարանի եւ բժշկական կենտրոնի կողմից պարգեւատրումների արարողությամբ, շնորհավորական ելույթներով, որոնցով հանդես եկան Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գրիգոր Դաշտոյանը եւ Գեղարքունիքի Վ. Պետրոսյանի անվան մարզային գրադարանի տնօրեն Մարիամ Համբարձումյանը:

Գավառում առողջապահական համակարգի ներդրման եւ զարգացման պատմությունը ներկայացնող ֆիլմն էլ Գեղարքունիքի մարզային գրադարանի նվերն էր գործող եւ վաստակած հանգստի անցած բուժաշխատողներին, ինչպես նաեւ հիշատակի տուրք գավառցի այն բժիշկներին, որոնք կյանքից հեռացել են, սակայն իրենց անունով ու գործով ապրում են տարբեր սերունդների հիշողության մեջ:

Տոնական միջոցառումը եզրափակվեց ջազ նվագախմբի համերգով՝ դիրիժորությամբ նվագախմբի հիմնադիր, գեղարվեստական ղեկավար, դաշնակահար, մանկավարժ, ջազի՝ հայկական ասոցիացիայի եւ հայկական ազգային երաժշտական ակադեմիայի անդամ Տիգրան Լալայանի:

Անահիտ Կարեյան

ՄԱՔԵՆԻՍԻ ԱՐՔԱՅԱԿԱՆ ՎԱՆՔԸ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Մաքենիս գյուղում է գտնվում Մաքենիսի արքայական ու հռչակավոր վանքը, որը համարվում է հայ ժողովրդի հոգեւոր-մշակութային կենտրոններից մեկը: Այն դարեր շարունակ սնուցել է մեր ժողովրդի մտքի ու ոգու անդաստանը, հարստացրել հայոց լեզուն ու մշակույթը, զարգացրել կրթությունն ու պատմագրությունը, միշտ եղել ազգապահպանության ու հայապահպանության բարձր դիրքերում:

Համալիրը բաղկացած է 37 միավոր ենթահուշարձաններից, որոնցից գլխավորներն են՝ Սուրբ Աստվածածին եկեղեցին, գավիթը, երկու թաղածածկ եկեղեցիները, մեկ միանավ եկեղեցին, գերեզմանոցը եւ պարիսպը:

Ս. Աստվածածնի գլխավոր տաճարը գտնվում է բակի ներսում: Այն իրենից ներկայացնում է ներքուստ խաչաձեւ գմբեթավոր կառույց: Անկյուններում ունի խորաններ: Այստեղ երեւում են նաեւ բազմաթիվ խուցերի եւ այլ կառույցների ավերակներ: Պատերին ունեցել է քանդակներ ու որմնանկարներ: Եկեղեցու շրջակայքում պահպանվել են խաչքարեր, որոնք ժամանակագրական առումով համապատասխանում են 9-10-րդ դարերին:

/շարունակությունը՝ էջ 4-ում/



ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԸ ԽՐԱԽՈՒՄԵԼ Է ՄԱՐԶԻ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԱՋՔԻ ԸՆԿԱԾ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ

Բուժաշխատողի օրվա առթիվ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը շնորհակալագրեր է հանձնել մարզի առողջապահական ոլորտի մի շարք ներկայացուցիչների՝ բարեխիղճ աշխատանքի, մասնագիտական բարձր պատրաստվածության եւ առողջապահության համակարգում ունեցած ներդրման համար:

Մարզպետը շնորհավորել է բուժաշխատողներին ու շնորհակալություն հայտնել նրանց ամենօրյա ծառայության համար՝ ընդգծելով, որ բժիշկների, բուժքույրերի, շտապօգնության աշխատակիցների եւ ոլորտի մյուս մասնագետների աշխատանքն անգնահատելի նշանակություն ունի յուրաքանչյուր համայնքի ու յուրաքանչյուր ընտանիքի համար:

Գեղարքունիքի մարզպետի շնորհակալագրին են արժանացել Գավառի ԲԿ աշխատակիցներ Անիկ Միերյանը, Լուսինե Շահինյանը, Հակոբ Թամիրյանը, Ջեմմա Գալոյանը, Լալա Ցվետկովան, Նունե Ափոյանը, Հասմիկ Ավալյանը, Աիդա Յուզբաշյանը, Մարտունու ծննդատան աշխատակիցներ Գոռ Շաբոյանը, Անժելա Հովհաննիսյանը, Մարինե Գասպարյանը, Օֆելյա Մելքոնյանը, Ճամբարակի ԱԿ աշխատակիցներ Նելլի Սարգսյանը, Նարինե Գրիգորյանը, Համբարձում Վարդանյանը, Սեւանի ԲԿ աշխատակիցներ Արմեն Մինասյանը, Արամ Ներսիսյանը, Հայարփի Խաչատրյանը, Մարտունու ԲԿ աշխատակիցներ Մետաքսյա Դարբինյանը, Արամ Գեւորգյանը, Սանասար Մելքոնյանը, Սոնիկ Թադեւոսյանը, Գայանե Թումոյանը, Վարդենիսի ԲԿ աշխատակիցներ Սվետլանա Մարգարյանը, Արեւիկ Մխոյանը, Արմինե Հակոբյանը, Գեւորգ Հակոբյանը, Լուսինե Մելքոնյանը, Դդմաշենի բուժամբուլատորիայի քույր-լաբորանտ Աիդա Հակոբյանը, Ծակքարի ԱԱՊԿ ընտանեկան բուժքույր Ռուզաննա Պողոսյանը, Վերին Գետաշենի բուժամբուլատորիայի բուժքույր Արմիկ Գրիգորյանը, Մեծ Մասրիկի ԱԱՊԿ ընտանեկան բժիշկ Մելսիդա Սիմոնյանը, Ակունքի ԱԱՊԿ ընտանեկան բժիշկ Աննա Նանանյանը, Սարուխանի բուժամբուլատորիայի ընտանեկան բուժքույր Աննա Խնկոյանը:

14.qxd 04/07/2026 20:00 Page 2

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Տաթեւիկ Սարգսյանը Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմում հանդիպել է մարզի գյուղատնտեսության ոլորտի ներկայացուցիչների հետ:

Հանդիպմանը մասնակցել են ՀՀ էկոնոմիկայի նախարարության, Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի, համայնքապետարանների պատասխանատու ստորաբաժանումների ղեկավարներ, մարզի անասնաբուծության ոլորտի ներկայացուցիչներ:

Հանդիպումը վարել է Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Վահան Զարոյանը:

Տաթեւիկ Սարգսյանը խոսել է ՀՀ կառավարության կողմից հաստատված գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության ծրագրերի մասին՝ հիմնականում անդրադառնալով անասնապահության, կաթի արտադրության սուբսիդավորման միջոցառումների հետ կապված հարցերին:

Նախարարի տեղակալի ներկայացմամբ՝ ֆերմերային կամ գյուղացիական տնտեսություններում կենդանիների գլխաքանակը ավելացնելու նպատակով ՀՀ կառավարությունն ամեն գլուխ կովի համար նախատեսել է տրամադրել 15.000-ական դրամ սուբսիդիա:

Սուբսիդավորումը տրամադրվում է շահառուի կողմից տնօրինվող միայն 3-րդ գլխից սկսած մինչեւ 22 գլուխը ներառյալ կովերի համար (առավելագույնը 20 գլուխ):

Կաթի գնի սուբսիդավորման ծրագրից օգտվելու նպատակով ցանկացողները էլեկտրոնային եղանակով դիմում պետք է ներկայացնեն համայնքի կամ բնակավայրի վարչական ղեկավարին՝ դիմումում նշելով բնակության վայրը եւ հասցեն, հեռախոսահամարը, իր անունով բացված բանկային հաշվեհամարը, 2026 թվականի ապրիլի 1-ի դրությամբ իր կողմից տնօրինվող կովերի գլխաքանակը եւ դրանց ականջապիտակների գույքային համարները:

Տաթեւիկ Սարգսյանը նաեւ ընդգծեց, որ գործընթացը շահառուների համար առավելագույնս պարզեցված է, եւ մարզի ֆերմերներին հորդորեց՝ ծրագրից օգտվելու նպատակով ցուցաբերել ակտիվ մասնակցություն:

Հանդիպման ավարտին նախարարի տեղակալը պատասխանեց ներկաներին հետաքրքրող հարցերին:

Հասմիկ Շահբազյան

ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎՈՒՄ Է ԶՈՎԱԲԵՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՇԵՆՔԸ

Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի Զովաբեր գյուղում արդեն տրվել է մանկապարտեզի շենքի հիմնանորոգման ծրագրով նախատեսված շինաշխատանքների մեկնարկը:

Ինչպես տեղեկացրեց Զովաբերի վարչական ղեկավար Սամվել Եսայանը, մանկապարտեզի շենքի հիմնանորոգման աշխատանքներն ընթանում են ՀՀ կառավարության կողմից իրականացվող «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրի շրջանակներում: Ծրագրի նախահաշվային արժեքը կազմում է 340 միլիոն դրամ, որն ամբողջությամբ հատկացվում է պետբյուջեի միջոցներից:

Ծրագրով նախատեսվում է շենքի տանիքի, հատակի, սանհանգույցների, էներգամատակարարման, ջրամատակարարման, ջեռուցման համայկարգերի հիմնանորոգում, նոր դռների ու պատուհանների տեղադրում, բակային տարածքի բարեկարգում, պատերի ներքին ու արտաքին հարդարում, այլ աշխատանքներ:

Շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել 2026 թվականի ընթացքում:

-Մանկապարտեզի հիմնանորոգման խնդիրն օրակարգային էր, որի լուծումն արդեն մեզ թույլ կտա՝ լիարժեքորեն օգտագործել շենքային պայմանները, ավելացնել մանկապարտեզ հաճախող երեխաների թիվը՝ ապահովելով նախադպրոցական կրթություն ստանալու իրավունքը:Մինչ շենքի հիմնանորոգումը Զովաբերի մանկապարտեզը գործում էր 1 խմբով՝ 30 տեղով: Շենքի հիմնանորոգումից հետո արդեն կունենանք 2 խումբ՝ 60 սանով, որոնց համար ապահովված կլինեն արդի չափորոշիչներին համապատասխան բոլոր պայմանները,- ներկայացրեց Սամվել Եսայանը:

«Գեղամա աշխարհ»

ՎԵՐԱՆՈՐՈԳՎՈՒՄ Է ԶՈՎԱԲԵՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԸ



Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի Զովաբեր գյուղի միջնակարգ դպրոցում ՀՀ կառավարության կողմից իրականացվող «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրի շրջանակներում մեկնարկել եւ ընթանում են վերանորոգման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրեց Զովաբերի միջնակարգ դպրոցի վարչատնտեսական համակարգող Զոհրակ Հովհաննիսյանը, դպրոցի վերանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 385 միլիոն դրամ, որն ամբողջությամբ հատկացվում է պետբյուջեի միջոցներից:

Ծրագրով նախատեսվում է տանիքի մասնակի, հատակի ջեռուցման, էներգամատակարարման, ջրամատակարարման համակարգերի ամբողջական վերանորոգում, նոր դռների տեղադրում, պատերի ներքին ու արտաքին հարդարում, բակային տարածքի կանաչապատում եւ ասֆալտապատում, մինի ֆուտբոլի դաշտի կառուցում, ցանկապատում, այլ աշխատանքներ:

Շինարարական աշխատանքների մեկնարկը տրվել է 2026 թվականի մայիսի կեսերից եւ հունիսի 16-ի դրությամբ արդեն իրականացվել շուրջ 35 տոկոսով: Ծրագիրը նախատեսվում է ավարտել 2026 թվականի ընթացքում: Ծրագրի ավարտից հետո Զովաբերի միջնակարգ դպրոցը կունենա արդի չափորոշիչներին համապատասխանող կրթական բոլոր պայմանները:

«Գեղամա աշխարհ»

ՎԵՐԱՆՈՐՈԳՎՈՒՄ Է ԳԵՂԱՄԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԸ

Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի Գեղամավան գյուղի Ա. Աբրահամյանի անվան միջնակարգ դպրոցում ՀՀ կառավարության կողմից իրականացվող «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրի շրջանակներում մեկնարկել եւ ընթանում են վերանորոգման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրեց Գեղամավանի միջնակարգ դպրոցի տնօրեն Արգիշտի Վարդանյանը, դպրոցի վերանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 385 միլիոն դրամ, որն ամբողջությամբ հատկացվում է պետբյուջեի միջոցներից:

Ծրագրով նախատեսվում է տանիքի, հատակի ջեռուցման, էներգամատակարարման, ջրամատակարարման համակարգերի վերանորոգում, նոր դռների եւ պատուհանների տեղադրում, պատերի ներքին ու արտաքին հարդարում, բակային տարածքի կանաչապատում եւ ասֆալտապատում, մինի ֆուտբոլի դաշտի կառուցում, ցանկապատում, այլ աշխատանքներ:

Շինարարական աշխատանքների մեկնարկը տրվել է 2026 թվականի հունիսի սկզբից: Ծրագիրը նախատեսվում է ավարտել 2026 թվականի ընթացքում: Ծրագրի ավարտից հետո Գեղամավանի միջնակարգ դպրոցը կունենա արդի չափորոշիչներին համապատասխանող կրթական բոլոր պայմանները:

«Գեղամա աշխարհ»

ԱԽՊՐԱԶՈՐՈՒՄ ԿԱՅԾԱԿԻ ՀԱՐՎԱԾԻՑ 10 ԳԼՈՒԽ ՈՉԽԱՐ Է ՈՉՆՉԱՑԵԼ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Ախպրաձոր գյուղի տարածքում հունիսի 14-ի ցերեկվա ժամը 15-ի սահմաններում տեղի է ունեցել կայծակնահարություն, ինչի արդյունքում մասնավոր տնտեսություններին պատկանող հոտից ոչնչացել է 10 գլուխ ոչխար:

Ախպրաձորի վարչական ղեկավար Լավրենդիկ Ղազարյանի հավաստմամբ՝ դեպքը տեղի է ունեցել գյուղի հանդամասում, հորդ տեղումների եւ ուժեղ ամպրոպի ժամանակ: Հունիսի 14-ի երեկոյան արդեն մորթված վիճակում գյուղ են տեղափոխվել 6 գլուխ ոչխարների մարմիններ, իսկ մյուս 4 ոչխարները անկած վիճակում գտել են միայն հունիսի 15-ին:

Տնտեսություններին հասցված վնասների չափերը գնահատվում են համապատասխան պատկան մարմինների կողմից:

ՄԵԿՆԱՐԿԵԼ ԵՆ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԻՍԱԿՈՎ ՓՈՂՈՑԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի Իսակովի փողոցում, ՀՀ կառավարության կողմից 2026 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում, արդեն տրվել է հիմնանորոգման աշխատանքների մեկնարկը:

Վարդենիսի Իսակովի փողոցի հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 164 միլիոն 220 հազար դրամ, որի 45 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 55 տոկոսը՝ Վարդենիսի համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսվում է ճանապարհի երթեւեկելի մասի ասֆալտապատում եւ մայթերի կառուցում 1435 գծամետր երկարությամբ, ջրահեռացման համակարգի տեղադրում, ոռոգման համակարգի վերանորոգում, գծանշում եւ կահավորում:

-Իսակով փողոցի հիմնանորոգումը կարեւոր նշանակություն ունի քաղաքի ենթակառուցվածքների բարելավման, երթեւեկության անվտանգության բարձրացման եւ բնակիչների համար առավել հարմարավետ միջավայր ստեղծելու տեսանկյունից,- ներկայացրին Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմից:

14.qxd 04/07/2026 20:00 Page 3

ԳԱՎԱՌԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ՏԵՂԱԴՐՎԵՑ ԱԿԱՆԱՎՈՐ ԲԺԻՇԿ ԱՎԵՏԻՔ ԲՈՒՌՆԱԶՅԱՆԻ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԸ

Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Բժշկական կենտրոնում տեղադրվեց եւ բացվեց ականավոր բժիշկ, ռազմական եւ քաղաքացիական առողջապահության կազմակերպիչ, ԽՍՀՄ առողջապահության նախարարի տեղակալ, բժշկական գիտությունների թեկնածու, բժշկական ծառայության գեներալ-լեյտենանտ, սոցիալիստական աշխատանքի հերոս, Լենինյան եւ ԽՍՀՄ պետական մրցանակների դափնեկիր Ավետիք Իգնատի Բուռնազյանին նվիրված հուշատախտակը:

Հուշատախտակի բացման արարողությանը մասնակցեցին ՀՀ Առողջապահության նախարարության «Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոնի» տնօրեն, ՀՀ Առողջապահության նախարարի՝ միջուկային բժշկության գծով խորհրդատու Արմինե Բաղեյանը, Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Ջանիկ Բազեյանը, Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանը, Գեղարքունիքի մարզի առողջապահական հաստատությունների տնօրեններ, Գավառի կրթամշակութային հաստատությունների ներկայացուցիչներ:

Նախաձեռնությունը կյանքի էր կոչվել Գեղարքունիքի Վարդգես Պետրոսյանի անվան մարզային գրադարանի եւ Գավառի բժշկական կետրոնի համատեղ ջանքերով:

Բացման արարողությունն ուղեկցվեց Գավառի տարածաշրջանի հոգեւոր հովիվ Տեր Նշան քահանա Սարգսյանի օրհնության խոսքով, իսկ հուշատախտակի բացումը կատարեցին Գավառի բժշկական կենտրոնի տնօրեն Գարիկ Սողոմոնյանն ու Ավետիք Բուռնազյանի ազգակից Վարդան Բուռնազյանը:

Այնուհետ Գավառի ԲԿ դահլիճում հրավիրված ցեղակցության մասնակիցները դիտեցին Ավետիք Բուռնազյանի կյանքի ու գործունեության մասին պատմող վավերագրական ֆիլմը, որը նկարահանվել էր «Քյավառ» հեռուստաընկերության կողմից:

Ավետիք Բուռնազյանի թողած գիտական ժառանգության, մարդկային մեծագույն արժանիքների մասին խոսեցին տեխնիկական գիտությունների թեկնածու, Հայաստանի ԱԷԿ-ի նախկին աշխատակից Վարդան Բուռնազյանը, ՀՀ Ան «Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոնի» տնօրեն Արմինե Բաղեյանը, Գավառի Բժշկական կենտրոնի տնօրեն Գարիկ Սողոմոնյանը, Գավառ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Գրիգոր Դաշտոյանը, Գեղարքունիքի մարզային գրադարանի տնօրեն Մարիամ Համբարձումյանը:

Նրանք շեշտեցին, որ համաշխարհային գիտության մեջ մեծ անուն ու դերակատարում ունեցող Ավետիք Բուռնազյանի անունը վեհորեն է հնչում ոչ միայն իր ծննդավայր Գավառ քաղաքում, այլ յուրաքանչյուր հայ մարդու սրտում ու հոգում, իսկ նրա թողած գիտական ժառանգությունն այսօր ծառայում է մոլորակի մարդկության բարօրությանը:

Գեղարվեստական կատումներով միջոցառումը զարդարեցին Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի շրջանավարտներ Լիլիա Հովհաննիսյանը եւ Գրիգոր Բալագոզյանը:

Խոսրով Խլղաթյան

ԵՐԿՈՒ ՋՐԱՆՑՔՆԵՐԻ ՎՐԱ ՕՐՎԱ ԿԱՐԳԱՎՈՐԻՉ ՋՐԱՄԲԱՐՆԵՐ ԵՆ ԿԱՌՈՒՑՎՈՒՄ

Գեղարքունիքի մարզում ՀՀ Ջրային կոմիտեի պատվիրատվությամբ արդեն մեկնարկել են ոռոգման ջրի օրվա կարգավորիչ երկու ջրամբարների շինարարական աշխատանքները:

Ինչպես տեղեկացրեց «Գեղարքունիք» ՋՕԸ գործադիր տնօրեն Արտաշ Սարդարյանը, ոռոգման ջրի օրվա կարգավորիչ ջրամբարներից մեկը, 30 հազար խորանարդ մետր տարողությամբ, կառուցվում է Մարտունի գետից սնվող «Մանասի առու» ջրանցքի վրա, մյուսը՝ 9 հազար խորանարդ մետր տարողությամբ, Օովինար գետից սնվող «Օովինարի մեծ առու» ջրանցքի վրա:

«Մանասի առու» ջրանցքի վրա կառուցվող օրվա կարգավորիչ ջրամբարի շինարարության պայմանագրային արժեքը կազմում է 325 միլիոն 800 հազար դրամ: Շինարարությունը նախատեսվում է ավարտի հասցնել 2027 թվականի ընթացքում: «Օովինարի մեծ առու» ջրանցքի վրա կառուցվող օրվա կարգավորիչ ջրամբարի շինարարության պայմանագրային արժեքը կազմում է 184 միլիոն 200 հազար դրամ: Շինարարությունը նախատեսվում է ավարտի հասցնել 2026 թվականի ընթացքում: Շինարարություններն իրականացվում են ՀՀ պետբյուջեի միջոցների հաշվին:

-Երկու դեպքում էլ անհրաժեշտություն էին օրվա կարգավորիչ ջրամբարների հիմնումները, քանի որ ամռան սակավաջուր ամիսներին արդեն ջրամատակարարումը հաճախ բավարար չէր լինում՝ լիարժեք սպասարկում իրականացնելու համար: Օրագրերի իրականացման դեպքում արդեն կարգավորիչ այս ջրամբարներում ամեն օր կունենանք կուտակված ոռոգման ջուր, որը հիմնանորոգված ջրանցքներով ու ինքնահոս եղանակով սպառողին կհասցնենք ժամանակին ու անկորուստ,-ներկայացրեց Արտաշ Սարդարյանը:

Խոսրով Խլղաթյան

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔՈՒՄ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ ՈՌՈԳՄԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՇՐՋԱՆԻՆ

«Գեղարքունիք» Ջրօգտագործողների ընկերությունում 2026 թվականի գարնանից նախապատրաստական ակտիվ աշխատանքներ են տարվում՝ ոռոգման նոր շրջանը կազմ ու պատրաստ դիմավորելու եւ անխափան կազմակերպելու համար:

Ինչպես տեղեկացրեց «Գեղարքունիք» ՋՕԸ գործադիր տնօրեն Արտաշ Սարդարյանը, 2026 թվականի ոռոգման շրջանում Գեղարքունիքի մարզի ոռոգման համակարգում կգործեն 27 պոմպակայան, 60 խորքային հոր, 3 ջրամբար, բազմաթիվ ինքնահոս ջրանցքներ ու ջրատարներ: Նախապատրաստական աշխատանքները ներառում են՝ պոմպերի վերանորոգումն ու տեղադրումը, ներտնտեսային ցանցերի նորոգումն ու փականների փոխարինումը, ջրանցքների ու ջրատարների մաքրումն ու վերանորոգումը, ջրամբարների լցվածության ապահովումը: Զուգահեռ ընթանում է նաեւ հայտերի հավաքագրման գործընթացը, որով եւ կհստակեցվի, թե նոր ոռոգման շրջանում ընկերությունը որքան տարածքի վրա պետք է սպասարկում իրականացնի:

-Նախապատրաստական աշխատանքների համար կատարված ծախսերը կկազմեն շուրջ 25-30 միլիոն դրամ: Այսօրվա դրությամբ գործարկման համար արդեն պատրաստ են պոմպերն ու խորքային հորերը, ավարտին են մոտենում նաեւ ջրանքների ու ինքնահոս ջրատարների մաքրման եւ վերանորոգման աշխատանքները: Ջրամատակարարումը կսկսենք առաջիկա 10-15 օրերի ընթացքում, լիովին կազմ ու պատրաստ, առանց խոչընդոտների: Ջրամատակարարումը տնտեսությունների կապահովվի ինչպես ինքնահոս, այնպես էլ մեխանիկական եղանակներով,- ներկայացրեց Արտաշ Սարդարյանը:

ՄԵԿՆԱՐԿԵԼ ԵՆ ԾՈՎԱԿ-ՎԱՐԴԵՆԻՍ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Գեղարքունիքի մարզում ՀՀ ՏԿԵ նախարարության պատվիրատվությամբ արդեն տրվել է Մ-10, Սեւան-Մարտունի-Վարդենիս-ՀՀ սահման ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքների մեկնարկը:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության եւ ենթակառուցվածքների կառավարման վարչությունից, ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 1 միլիարդ 977 միլիոն դրամ, որն ամբողջությամբ հատկացվում է պետբյուջեի միջոցներից:

Օրագրով նախատեսված է է Մ-10, Սեւան-Մարտունի-Վարդենիս-ՀՀ սահման ավտոճանապարհի Օովակ-Վարդենիս 9 կիլոմետր երկարության հատվածի հիմնանորոգում: Աշխատանքները ներառում են՝ ավտոճանապարհի երթեւեկելի մասի հին հիմքի հեռացում ու նոր հիմքի եւ երկշերտ ասֆալտբետոնյա ծածկի, եզրաքարերի տեղադրում, մայթերի, ջրահեռացման համակարգի կառուցում, գծանշում, կահավորում, այլ աշխատանքներ:

Շինարարությունը նախատեսվում է ավարտել 270 օրվա ընթացքում:

ՀՈՒՆԻՍ ԱՄՍԻՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲՈՒԺՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԾՆՎԵԼ Է 75 ԵՐԵԽԱ

Գեղարքունիքի մարզի ծննդօգնություն իրականացնող բուժհիմնարկներում 2026 թվականի հունիս ամսին ծնվել է 75 երեխա՝ 45 տղա եւ 30 աղջիկ:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության եւ սոցիալական հարցերի վարչությունից, 25 երեխա ծնվել է Մարտունու ծննդատանը, 21-ը՝ Սեւանի, 15-ը՝ Գավառի, 10-ը՝ Վարդենիսի բժշկական կենտրոններում, 4-ը՝ Ճամբարակի առողջության կենտրոնում:

2025 թվականի հունիս ամսին Գեղարքունիքի մարզի ծննդօգնություն իրականացնող բուժհիմնարկներում ծնվել է 70 երեխա՝ 36 տղա եւ 34 աղջիկ:

ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ՀՐԱՉՅԱ ՆԵՐՍԻՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԱՎԱՐՏՎԵԼ ԵՆ

Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի Հրաչյա Ներսիսյան փողոցի ասֆալտապատման աշխատանքներն ամբողջությամբ ավարտված են, ընթացքի մեջ են գտնվում մայթերի սալիկապատման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, Հրաչյա Ներսիսյան փողոցի ասֆալտապատման ծրագրի պայմանագրային արժեքը կազմել է 73 միլիոն դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2026 թվականի մայիսից եւ հունիսի 23-ի դրությամբ արդեն գտնվում են ավարտական փուլում:

Նույն Հրաչյա ներսիսյան փողոցում ընթացքի մեջ են երկկողմանի մայթերի սալիկապատման աշխատանքները, որոնց մեկնարկը տրվել է 2026 թվականի մայիս ամսից: Օրագրով նախատեսված է երկողմանի մայթերի կառուցում ու սալիկապատում՝ 1600 քառակուսի մետր մակերեսով: 2026 թվականի հունիսի 23-ի դրությամբ շինարարական աշխատանքներն այստեղ իրականացված են շուրջ 40 տոկոսով: Օրագիրը նախատեսվում է ավարտել 2026 թվականի ընթացքում:

Շինարարական աշխատանքներն իրականացնում է «ՎՄՎ ՔԱՄՓԻ» ընկերությունը:

-Մարտունու Հրաչյա Ներսիսյան փողոցն արդեն դարձել է անճանաչելի՝ մեկընդմիշտ հրաժեշտ տալով նախկին անհրապույր, քարուքանդ տեսքին: ՀՀ կառավարության կողմից վերջին տարիներին իրականացված ծրագրերի արդյունքում այս փողոցի բնակիչներն օգտվում են գիշերային լուսավորության ցանցից, ջրամատակարարման ու ջրահեռացման համակարգերից, կոյուղու ցանցից, արդեն ասֆալտապատ ճանապարհից: Կարճ ժամանակ անց կսալիկապատվեն նաեւ մայթերը: Նման աստիճանի բարեկարգ տեսքի մասին այս փողոցի բնակիչները երազել են տասնամյակներ շարունակ, ու այդ երազանքը հիմնովին կատարված է,- ներկայացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից:

«Գեղամա աշխարհ»

14.qxd 04/07/2026 20:00 Page 4

ՄԱՔԵՆԻՍԻ ԱՐՔԱՅԱԿԱՆ ՎԱՆՔԸ

/սկիզբը՝ էջ 1-ում/

Ս. Աստվածածնի արեւմտյան կողմում է գտնվում 10-րդ դարում ավելացրած հասարակ գավիթը: Ս. Աստվածածնի արեւտյան կողմում էր գտնվում 7-րդ դարում կառուցված միանավ եկեղեցին, որն ամբողջովին ավերված է:

Մաքենիսի վանական համալիրը վեր է խոյանում Վարդենիսի լեռնաշղթայի հյուսիսային փեշին, Մաքենիս գետի աջ ափին, ծովի մակերեւույթից 2200 մետր բարձրության վրա: Այս հոգեւոր կառույցի գործունեության մասին գրավոր հիշատակությունները թեեւ վերաբերում են 7-րդ դարին, սակայն որոշ փաստեր խոսում են այն մասին, որ այստեղ հոգեւոր-մշակութային կյանքը սկզբնավորվել է շատ ավելի վաղ, նախաքրիստոնեական ժամանակներում:

Մաքենավանքից մոտ 2,5 կիլոմետր հեռավորությամբ գտնվում է Քրիստոսից առաջ 2-րդ հազարամյակում թվագրվող դամբարանադաշտ, իսկ մի քանի կիլոմետր դեպի հարավ, Ախպրածորի տարածքում, տարածվում են Անտիկ դարաշրջանին վերաբերող քաղաք-բնակավայրի ավերակները, որոնց ուսումնասիրությամբ զբաղվել է հայ-իտալական հնագիտական միացյալ արշավախումբը 1990-ական թվականների վերջերին: Այդ բնակավայրը արշավախմբի կողմից ստացել է Սաթենա խորհրդանշական անունը՝ ի պատիվ հայոց թագուհի Սաթենիկի: Այսօր էլ պարզ նշմարվում են այդ քաղաքի հատակագծված հրապարակը, ճանապարհները, ջրամատակարարման համակարգի հետքերը:

Բացի այդ, 2014 թվականին ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի կողմից կատարված հնագիտական պեղումների եւ ուսումնասիրությունների արդյունքում նույն Ախպրածորում հայտանբերվեց մի նոր հնագույն բնակատեղի-հուշարձան, որը վերաբերում է Քրիստոսից առաջ երկրորդ հազարամյակի կեսին կամ միջին բրոնզեդարյան ժամանակաշրջանին: Հնագիտական արշավախմբի ղեկավար, պատմական գիտությունների դոկտոր Ռուբեն Բադալյանը տողերիս հեղինակին տված հարցազրույցում փաստեց, դատելով հայտնաբերված նյութերի ուսումնասիրությունների արդյունքներից, որ Ախպրածորի ու նրան շրջապատող մի շարք բնակավայրերի, այդ թվում եւ Մաքենիսի տարածքները եղել են ե՛ւ մշտական, ե՛ւ խիտ բնակեցված՝ խոր հնադարից մինչ մեր օրերը: Ու պետք չէ բացառել, որ Մաքենիսի վանքը հենց վեր բարձրացած լինի հեթանոսական տաճարի ավերակների վրա՝ հաշվի առնելով նաեւ նրա բարձրադիր, իշխող դիրք ունեցող տեղանքը, արեւմտյան կողմից Մաքենիս գետի ափից վեր բարձրացող ժայռեղեն բնական պատնեշը:

Ավելին, ինչպես վկայել է հայ ազգային ու եկեղեցական նշանավոր գործիչ Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցը, 1862 թվականին այցելելով Գեղարքունիքի մարզի բնակավայրեր ու Մաքենյաց վանք, ինքը Հովհաննես անունով վանահորից տեղեկացել է, որ Մաքենյաց վանքի մոտ մի բլրակի միջից եւս դուրս է եկել հնադարյան աղյուս՝ զանազան նկարներով զարդարված, ինչը, անշուշտ, փաստում է Ուրարտու պետության կողմից այս տարածքի նվաճման, ուրարտական մշակույթի տարածման ու հաստատման մասին:

Գտնվելով Արցախ տանող ճանապարհներից մեկի հանգույցում՝ Մաքենյաց վանքը շատ հաճախակի ենթարկվել է նաեւ օտար նվաճողների կրկնվող ասպատակություններին, նաեւ՝ բնական աղետներին, սակայն կարողացել է դիմակայել բոլոր դաժան փորձություններին ու սերունդներին ներկայանալ կանգուն, փառահեղ տեսքով:

Մաքենյաց վանքի գործունեության մասին պահպանված է բավականաչափ հարուստ գրականություն, որով եւ կարելի է գաղափար կազմել նրա փառքի, հազարամյակներ շարունակ անցած ճանապարհի ու թողած հոգեւոր ժառանգության մասին:

Շատ ավելի ակնածելի է այն, որ Մաքենյաց վանքը դարերով եղել է ազգային ազատագրական շարժումներն ուղղորդող, շունչ ու ոգի հաղորդող, աշխարհիկ իշխանության հետ ձեռք ձեռքի պայքարող կառույց:

Մաքենյաց վանքի առաջնորդ, «Հայրերի հայր» Սողոմոն Վարդապետը 701 թվականին կազմել է Տերունական տոների լուսաբանությունը եւ նահատակների հիշատակարանը՝ Տոնացույցը, որը կոչվում է «Վարք սրբոց» եւ «Հայսմավուրք»:

8-9-րդ դարերում Մաքենյաց վանքի դպրոցում ուսանել են Ստեփանոս Սյունեցին, Վահան Գողթնացին, կաթողիկոսներ Սողոմոն Ա Գառնեցին, Մաշտոց Ա Եղվարդեցին, Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսը, ով հայտնի է նաեւ որպես հայ անվանի մատենագիր:

Իսկ ո՞վ է եղել Վահան Գողթնացին, ում պատվին շարական է գրել նրա քույր, 8-րդ դարի հայ բանաստեղծուհի Խոսրովիդուխտ Գողթնացին:

Նա հայ Առաքելական եկեղեցու կողմից սրբադասված անձնավորություն է, իշխան Խոսրով Գողթնացու որդին: Վերջինս այն հայ անվանի իշխաններից շարքում էր, որոնց արաբական տիրապետության շրջանում 705 թվականին նենգ խաբեությամբ հավաքելով Նախճավանի եւ Խրամի եկեղեցիներում՝ արաբ հրոսակները կենդանի հրկիզել են: Ըստ հայ մատենագիրների հաղորդած տեղեկությունների՝ այս ոճրագործության զոհերի թիվն անցել է 1200-ը: Նախարարական այլ ընտանիքների հետ արաբները գերել եւ Դամասկոս են ուղարկել նաեւ մանուկ Վահան Գողթնացուն: Դամասկոսում իսլամացրել են հայ մանուկներին՝ իսլամ ուսուցանելով եւ դաստիարակելով իսլամական ոգով: Այստեղ առաջադիմությամբ աչքի է ընկել Վահան Գողթնացին, որին կոչել են Վահաբ: Ուսումն ավարտելուց հետո նրան նշանակել են ամիրապետի ատենադպիր: Վահան Գողթնացին, թեեւ իսլամացած ու արաբացած, սակայն տեղյակ էր իր քրիստոնյա իշխանական տոհմից սերված ու հայ լինելուն: Երբ Հովհաննես Գ Օձնեցու միջնորդությամբ 719 թվականին ընդհանուր ներում եւ վերադարձի իրավունք է շնորհվել գերյալ քրիստոնյաներին, Վահան Գողթնացին եւս, պատճառաբանելով, որ կամենում է վերականգնել իր իշխանական իրավունքները Գողթն գավառում, էմեր ամիրապետից թույլտվություն է ստացել եւ վերադարձել Հայաստան: Օմար II խալիֆայի մահից հետո վերստին ընդունել է քրիստոնեություն: Շրջել է վանքից վանք եւ ճգնել Շիրակ գավառում, ապա ամուսնացել է Սյունյաց իշխանի դստեր հետ՝ կամենալով վերջնականապես հաստատվել Հայաստանում: Սակայն Վահան Գողթնացուն, որպես իսլամն ուրացածի, փնտրել է արաբական իշխանությունը: Արաբները հետապնդել են նրան, կանչել Ռուծափ, որտեղ Հիշամ խալիֆան պահանջել է հրաժարվել քրիստոնեությունից եւ վերադառնալ արքունիք: Վահան Գողթնացին, Հիսուսին Տեր եւ Փրկիչ վկայելու եւ հանուն նրա իր արյունը թափելու հաստատ որոշմամբ, ամիրապետին խոստովանել է քրիստոնեություն ընդունած լինելը: Անհողդողդ դավանել է Հիսուսին՝ որպես Աստծո Որդու եւ, արհամարհելով սպառնալիքներն ու չարչարանքները, մարտիրոսական պսակ ընդունել՝ գլխատմամբ: 744 թվականին Վահան Գողթնացու վարքը գրի է առել Երաշխավոր վանքի վանահայր Արտավազդ վարդապետը: Ըստ «Հայսմավուրքի» մարտի 28-ին նշվել է նրա տոնը:

«...Որպես զքաջ նահատակ պատրաստեալ ի պատերազմ, կատարեցեր զընթացս քո արիաբար յազգացն հարաւայնոյ...»,-գրում է Խսորովիդուխտ Գողթնացին իր սրբացած եղբորը ձոնված շարականում: Կյանքի ընդամենը 37 գարուն բոլորած, հանուն ազգային ինքնության ու հավատի զոհ գնացած այս այրը Մաքենյաց վանքում անցկացրել ու ճգնել է 4 տարի:

Մաքենյաց վանքը, սրբերի երանելի ներկայությունից բացի, կրել է նաեւ արյունարբու դահիճների սարսափը, ավերն ու նողկանքը: Այսպես, 728 թվականին Ատրպատականից պարսիկ Բաբանի հրոսակները, ինչպես վկայում է Ստեփանոս Օրբելյանը, ներխուժել են Գեղարքունիք գավառ, սրի քաշել 15 հազար հոգու, կողոպտել Մաքենյաց վանքը, այրել ու ավերել վանքի բոլոր շինությունները: Մինչ այդ, խույս տալով վտանգից, Մաքենյաց վանքի միաբանության կեսը, Սողոմոն վարդապետի գլխավորությամբ, տեղափոխվել է Զրեսկ վանք, մյուս կեսը՝ Արցախի Եղիշե Առաքյալի վանքը : Լքված եւ ավերված վանքը 788 թվականին վերականգնել է Հայոց կաթողիկոս Սողոմոն Ա Գառնեցին: 855 թվականին Մաքենյաց վանքում է թաղվել Հովհաննես Դ Ողայեցի կաթողիկոսը, որը վախճանվել էր Գեղարքունիք հովվական այցելության ժամանակ:

Մաքենյաց վանքը նոր շունչ ու կենդանություն է առել 9-րդ դարի վերջին, երբ Հայաստանում հետզհետե թոթափվում է արաբական եղկելի լուծը, եւ Սյունյաց Վասակ Գաբուռն իշխանի ու նրա կին Մարիամ Բագրատունու երեւելի զավակ Գրիգոր Սուփան իշխանը միանավ բազիլիկ եկեղեցուն հյուսիս-արեւելքից կից սրբատաշ տուֆով կառուցել է Ս. Աստվածածին եկեղեցին, վանքը շրջապատել բարձր պարիսպով: Նա Մաքենյաց վանքին նվիրել է այգիներ՝ Գառնիում, Երեւանում Եղեգիսում, 5 կրպակ՝ Անիում, նախիրներ եւ հարստություն: Գրիգոր Սուփանի թողած ընդարձակ արձանագրությունն ամբողջությամբ մեջ է բերել Ստեփանոս Օրբելյանը. «Կամավն Աստուծոյ, ես, Սուփան Սյունյաց իշխան, շինեցի զՄաքենացոց եկեղեցիս եւ անխնայաբար զարդարեցի պատվական սպասովք եւ աստվածային կտակարանոք. Եւ ետու զսեփական տեղն մեր ի սա որ ըստ անվան եկեղեցվոյս Աստվածածին ասի, յուր ամենայն սահմանոք, լերամբ եւ դաշտիվ: Եւ էտու որս ձկանց զՔողաշեն՝ սեղանոյն Չ/700/ դրամ ի Դեղձանագետոյ դապալեն Մ/200/ դրամ ի Կաթկայ, ՅԾ/350/ յԱնմեռեն, որ լինի ՌՄԾ/1250/ դրամ: Եւ էտու Ե/5/ կուղպակս յԱնի- եւ Ե /5/ այգի յԵրեւան եւ Շ/500/առու այգի ի գյուղաքաղաքն Գառնի, Բ այգի յԵղեգիս, , եւ զամենայն պէտս սուրբ եղբայրությանս լցի առատապես եւ փարթամացուցի ներքոյ եւ արտաքոյ.Ետու եւ ջուլիրս եզանց եւ ջոկս զվարակացեւ անդեայս եւ հոտս ոչխարաց...»:



Ընդարձակ այս արձանագրությունը հավաստում է առ այն, որ արաբական լուծը թոթափած Հայաստանը Բագրատունիների թագավորության ու Սյունյաց նախարարական տան ջանքերով ձեռնարկել է ազգային վերածննդի հաստատուն ու խիզախ քայլերը՝ հայկականության շունչը տարածելով սուրբ նախնյաց հայրենիքում:

Անդրադառնալով այս արձանագրությանը՝ Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցը եւ Սեդրակ Բարխուդարյանը հավաստում են, որ ժամանակի ընթացքում, փլվելու կամ ավերածությունների պատճառով արձանագրություն կրող որոշ քարեր ընկել են, անհետացել, սակայն պահպանված քարերի մի մասը դեռեւս կարող են հավաստել իշխանական այս արձանագրության իսկությունը, որն անչափ կարեւոր վավերագիր է մեր հայրենիքի պատմության համար:

Մեքենյաց վանքը, հզորանալով, անկախացել է Սյունյաց մետրոպոլիտությունից եւ իշխել ու հոգեւոր ղեկավարություն իրականացրել ողջ Գեղարքունիք գավառում՝ միայն 1513 թվականին ընդունելով Տաթեւի վանքի գերակայությունը: 16-րդ դարում, ըստ վանքի ներսի պատին պահպանված արձանագրության, այն նորոգել է Մելիքբեկը, 1666 թվականին՝ վանահայր Խաչատուր Ջուղայեցին:

Մաքենյաց վանքը վերջին անգամ նորոգումների ու վերականգնման է ենթարկվել 1980-ական թվականներին, ՀԽՍՀ Հուշարձանների պահպանության վարչության կողմից: Վերականգնվել են գմբեթը, մյուս քանդված հատվածները, սալարկված հատակի քանդված տեղերը: 2010-ական թվականներին բարերար Մակեդոն Ամիրզադյանի միջոցներով վերականգնվել է վանքի քանդված պարիսպը:

/շարունակությունը՝ էջ 5-ում/

14.qxd 04/07/2026 20:00 Page 5

ՄԱՔԵՆԻՍԻ ԱՐՔԱՅԱԿԱՆ ՎԱՆՔԸ

/սկիզբը՝ էջ 4-ում/

2014 թվականին մաքենիսցի բարերաներ Հրանտ եւ Արսեն Մանուկյան եղբայրները պատրաստել են տվել 60 կիլոգրամանոց պղնձակուռ զանգը, որը տեղադրվել եւ օծվել է նույն տարվա հոկտեմբեր ամսին:

Մաքենյաց վանք բերող Ծովակ-Ախպրաձոր միջհամայնքային ճանապարհը հիմնանորոգվեց 2020-2021 թվականների ընթացքում, ՀՀ կառավարության միջոցներով, ինչի արդյունքում այսօր տարածքում զարգանում է զբոսաշրջությունը, տնտեսական ակտիվություն է նկատվում Լճավան, Մաքենիս, Ախպրաձոր ու Ծովակ գյուղերում, կտրուկ ավելացել է սրբավայր այցելող մարդկանց թիվը:

18-րդ դարում Մեքենյաց վանքի թեմում եղել են Գեղարքունիքի 50 գյուղ եւ 5 անապատ: Վանքում պահվել է «Մաքենյաց ս. Նշան» խաչը՝ Կենաց փայտի մասունքով, որը բերվել է Եդեսիայից, 11-րդ դարում:

1170 թվականին Ներսես Շնորհալին Մեքենյաց վանքում վերցրել է այնտեղ մշակված եկեղեցական կանոնակարգը՝ հայկական մյուս վանքերում կիրառելու համար:

Այստեղ 1496 թվականին ստեղծվել է ձեռագիր Ավետարան, որն այժմ պահպանվում է Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում:

Մաքենիսի վանքը, նրա հոգեւոր առաջնորդներն ու սպասավորները շատ ծանր նեղություններ են կրել թե՛ սելջուկյան, թե՛ թաթարմոնղոլական, թե՛ Սեֆյան Իրանի տիրապետությունների շրջանում հաճախակի կրկնվող ասպատակությունների ժամանակ, սակայն կործանարար ժամանակաշրջանը վրա է հասել այն ժամանակ միայն, երբ 18-րդ դարում Մաքենիսի վանքի շրջակա գյուղերը լիովին հայաթափվել են մահմեդականների եռանդուն ջանքերով, ոճրագործ արարքներով ու քաղաքականությամբ:

Մաքենիսի տարածքը զավթած թուրքերը գյուղը կոչել են Կզլվանք, այսինքն՝ ոսկե վանք: Գուցե թե զավթիչներին հաջողվել է գտնել ու յուրացնել վանքի գանձարանը:

Մաքենյաց վանքը 1862 թվականին լքված ու ավեր է գտել Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցը: Նույն վիճակն է նկարագրում նաեւ ականավոր մյուս հայագետ Երվանդ Լալայանը, ով 1910-ական թվականներին այցելել է այստեղ: «Ղըզըլվանքը թրքաբնակ մի աննշան գյուղ է լեռան լանջին՝ իր առաջ ունենալով մի սքանչելի տեսարան: Գյուղի ծայրին բարձրանում է Մաքինյաց հռչակավոր վանքը՝ կիսակործան եւ անխնամ»,- գրում է Երվանդ Լալայանը:

Հուշարձանների պահպանության պետական ցանկում Մաքենիս գյուղից ընդգրկված են Մաքենավանքից 200 մետր դեպի հյուսիս ընկած 15-17-րդ դարերի գերեզմանոցը՝ խաչքար-տապանաքարերով, մաքենիսցի Հովհաննես Սարոյանի տնամերձում գտնվող 15-16-րդ դարերում թվագրվող երկու խաչքարերը, 2,5 կիլոմետր դեպի հարավ-արեւելք տարածվող դամբարանադաշտը, 7-20-րդ դարերով թվագրվող պատմական գերեզմանոցը, 9-18-րդ դարերով թվագրվող խաչքարերը, որոնց մի մասն արձանագիր են՝ իրենց վրա պահպանելով Երեմի, Ենոքի, Կուլջահանի, Դաստակուլի, Սանդուխտի, Տեր Պետրոսի, Հովհաննես Սարկավագի, Շահալամի, Շմավոնի, Հրեղիի, Նանի, Նասիպի անունները:

Մաքենյաց վանքը, հռչակավոր լինելուց զատ, համարվում է հայ ժողովրդի գլխավոր ուխտավայրերից ու սրբավայրերից մեկը: Այստեղ տարվա բոլոր եղանակներին ուխտի են գալիս հայ ժողովրդի հավատավոր զավակները Հայաստանի տարբեր շեներից ու աշխարհի բոլոր ծագերից՝ կատարելու իրենց Ուխտը, խոնարհումն ու հոգու պարտքը, հաղորդվելու նախնյաց սուրբ հոգիներին ու ազգային արժեքներին, առ Աստված երանավետ աղոթք բարձրացնելու:

Վանքի արեւմտյան կողմում, պարսպի մուտքից ցած բացվում է մի սքանչելի տեսարան՝ Մաքենիս գետի ու կիրճի հոյակապ համայնապատկերը: Իսկ վանքի պատերի մեջ շարված կամ բակի տարածքում ու շրջակայքում տեղադրված խաչքարերը համարվում են արվեստի գլուխգործոցներ, հայ ճարտարապետության գեղեցիկ նմուշներ:

Մաքենյանց վանքը վեր է խոյանում բնության գողտրիկ, խորհրդավոր, դրախտային մի անկյունում, ուր կյանքում գոնե մեկ անգամ հայտնվող մարդն անմիջապես զգում է բնության զորավոր ու անկրկնելի ուժը, ձգող էներգիան, լեռներից սրընթաց ցած հոսող գետի ջրերի շառաչի միախառնումը մեղմ կամ հուժկու քամիների սլացքին, երկնքից շողշողացող արեւի ճառագայթներին, վայրի հավքերի դայլայլին, մարդկային բարբառին: Չորս կողմից բարձրաբերձ, տեղ-տեղ ձյունապատ լեռնակատարներ են, ալպյան մարգագետիններով հարուստ սարալանջեր, քչքչան աղբյուրներ, գարնանային, ամառային ու աշնանային բազմերանգ ծաղիկներ, խորունկ ձորեր, իսկ խստաշունչ ձմռանը՝ ձնապատ ու ձնառատ մի ողջ աշխարհ, ուր անկանոն թափառում է «Վիշապաձայն բուքը վսեմ»: Իսկ որ կարեւորն է՝ Մաքենյաց վանքին այսօր շրջապատում են արարչագործ զորության մեջ ապրող հայկական շեները: Այս ամենին գումարվում է Միջնադարյան Հայաստանի պատմաճարտարապետական այս սքանչելի կոթողի անկրկնելի, բացառիկ գեղեցկությունը, որն անխոս պատմում է սերունդներին հայ մարդու մտքի թռիչքների, հոգու վեհության, ծաղկող ու քանդակող ձեռքերի զորության, անսանան կամքի ու հավատի մասին:

Մաքնյաց վանքը հայ ժողովրդի հոգու հավերժական կանչն է, որ միշտ սպասում է իր օրհնյալ ուխտավոր զավակներին:

Խոսրով Խլղաթյան

ԶՈՐԱԳՅՈՒՂԻ ՇՈՂԱԳԱՎԱՆՔԻ ԳԵՐԵԶՄԱՆՈՅՈՒՄ ՊԱՀՊԱՆՎԵԼ Է ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ՖԱԼԼՈՍԻ ՔԱՆԴԱԿ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Զորագյուղ գյուղի Շողագավանք պատմաճարտարապետական հուշարձանի շրջակայքի գերեզմանոցում, միջնադարյան գեղաքանդակ խաչքարերի կողքին, պահպանվել է հեթանոսական ֆալլոսի քանդակ, որին տեղի բնակիչները կոչում են «Պորտաքար»:

Ինչպես տեղում ներկայացրեց Զորագյուղի բնակիչ, 63 տարեկան Հակոբ Հակոբյանը, այդ Պորտաքարի վրա եկել ու նստել են տարածքում կամ այլ վայրերում բնակվող չքեր կանայք, որպեսզի կարողանան մայրանալ:

-Այս Պորտաքարն այսօր էլ չի կորցրել իր նշանակությունը: Ես մեծերից եմ լսել, որ չքեր կանայք շատ են այցելել այստեղ ու նստել Պորտաքարի վրա, որն իրենից ներկայացնում է տղամարդու սեռանդամի քանդակ: Նրանք հիմնականում եկել են գիշերով կամ այն պահերին, երբ տարածքում մարդկանց չեն նկատել: Չի էլ բացառվում, որ ավանդույթի ուժով այսօր էլ գտնվեն այստեղ այցելող չքեր կանայք, որոնց տանջում է մայրանալու հոգսը: Շողագավանքի գերեզմանոցում առկա են գեղաքանդակ, շքեղ տեսքով հարյուրից ավելի խաչքար-տապանաքարեր, որոնք կերտվել են 9-17-րդ դարերի ընթացքում, սակայն նրանց մեջ իր բացառիկ տեղն ունի նաեւ այս հուշարձանը, որը բնական է, կերտվել է շատ ավելի հեռավոր ժամանակներում՝ հայ հեթանոսական դարաշրջանում՝ հրաշքով պահպանվելով քրիստոնեական հուշարձանների կողքին,- ներկայացրեց Հակոբ Հակոբյանը:

Զորագյուղի Շողագավանքի գերեզմանոցում գտնվող Պորտաքար-ֆալլոսի քանդակն ունի ավելի քան 1 մետր երկարություն ու 40 սանտիմետր լայնություն: Այն կերտված է տեղական բազալտ քարից ու գտնվում է գետնատարած դիրքում: Չի բացառվում, որ այն ավելի վաղ ժամանակներում եղել է կանգնեցված վիճակում:

Զորագյուղի Պորտաքար-ֆալլոսի մասին որեւէ հիշատակություն չկա ինչպես պատմական աղբյուրներում, այնպես էլ Զորագյուղում ուսումնասիրություններ կատարած հնագետների աշխատություններում: Պետական պահպանության հուշարձանների ցանկում էլ այն հաշվառված չէ:

Ֆալլոսի պաշտամունքը Հին Հայաստանում տարածված է եղել անհիշելի ժամանակներից: Ֆալլոսը՝ բնության բեղմնավորումն ու վերածնությունը խորհրդանշող քարը, բնորոշ է եղել Հայաստանի պաշտամունքային սրբավայրերին, որոնք առկա են եղել Լճաշենում, Մեծամորում, Օշականում, այլ տեղերում:

Խոսրով Խլղաթյան

ՍԱՐՈՒԽԱՆՈՒՄ 2018-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 20 ԾՐԱԳԻՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ

Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Սարուխան գյուղում 2018-2025 թվականների ընթացքում սուբվենցիոն եւ պետական ծրագրերով սոցիալ-տնտեսական ու կենսական նշանակության 20 ծրագիր է իրականացվել, որոնց ուղղությամբ կատարված կապիտալ ներդրումները կազմել են 2 միլիարդ 6 միլիոն 202 հազար 427 դրամ:

Իրականացված ծրագրերից 17-ը սուբվենցիոն են՝ 784 միլիոն 202 հազար 427 դրամ ընդհանուր արժեքով, եւ 3-ը՝ պետական՝ 1 միլիարդ 222 միլիոն դրամ ընդհանուր արժեքով:

Իրականացված աշխատանքների արդյունքում Սարուխանում 2018-2025 թվականների ընթացքում կառուցվել է 17000 մետր արտաքին լուսավորության ցանց, 8810 քառակուսի մետր ասֆալտապատ մայթեր, 1780 մետր ջրահեռացման, 2260 մետր ոռոգման, 3150 մետր խմելու ջրատարներ, 1 մանկական խաղահրապարակ, 2 կամուրջ, Գավառի բնության ու պատմության հուշարձանների գովազդային վահանակներ կրող ավտոսպասարկման կանգառ, հիմնանորոգվել ներհամայնքային ու մարզային նշանակության 6855 մետր ճանապարհ, թիվ 1 մանկապարտեզի շենքը, վերանորոգվել թիվ 2 միջնակարգ դպրոցի շենքը:

Գավառ-Գեղարքունիք մարզային նշանակության ավտոճանապարհի Սարուխանի հատվածը, 3610 գծամետր երկարությամբ, հիմնանորոգվել է պետական ծրագրով, շուրջ 890 միլիոն դրամի ներդրմամբ, 2023-2025 թվականների ընթացքում:

Պետական երկրորդ ծրագրով, «Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի» միջոցներով, 92 միլիոն դրամի ներդրմամբ, կառուցվել է 2800 մետր խմելու ջրատարի ներքին ցանց:

Սարուխանի թիվ 2 միջնակարգ դպրոցը վերանորոգվել է պետբյուջեի միջոցներով,«300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրի շրջանակներում, 238 միլիոն դրամ արժեքով: Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի հուլիսին եւ ավարտվել 2026 թվականի մարտ ամսին:

«Գեղամա աշխարհ»

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի ՀԱՄԵՄԱՏ ԱՐԴԵՆ ԲԱՐՁՐԱՑԵԼ Է 7 ՍԱՆՏԻՄԵՏՐՈՎ

Սեւանա լճի մակարդակը 2026 թվականի հուլիսի 1-ի դրությամբ ծովի մակերեւույթից գտնվել է 1900 մետր 76 սանտիմետր բարձրության վրա, ինչն արդեն 7 սանտիմետրով գերազանցում է նախորդ տարվա նույն օրում գրանցված նիշը:

ՀՀ ՇՄՆ «հիդրոօդերեւութաբանության եւ մոնիթորինգի կենտրոն»ՊՈԱԿ տեղեկագրի տվյալներով՝ 2026 թվականի հունվարի սկզբից մինչ հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում Սեւանա լճի մակարդակը բարձրացել է 54 սանտիմետրով:

Նույն ժամանակահատվածում Արփա-Սեւան թունելային ջրատարով Սեւանա լիճ է տեղափոխվել 137 միլիոն 294 հազար խորանարդ մետր ջուր:

Ոռոգման նպատակներով Սեւանա լճից Հրազդանի հունով ջրառ առայժմ չի իրականացվում:

14.qxd 04/07/2026 20:00 Page 6

ԱՐԵԳՈՒՆԻՈՒՄ 2018-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 7 ԾՐԱԳԻՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Արեգունի գյուղում սուբվենցիոն եւ պետական ծրագրերի շրջանակներում 2018-2025 թվականների ընթացքում սոցիալ-տնտեսական եւ կենսական նշանակության 7 ծրագիր է իրականացվել, որոնց ուղղությամբ կատարված կապիտալ ներդրումները կազմել են 1 միլիարդ 538 միլիոն 911 հազար դրամ:

Իրականացված ծրագրերից 5-ը սուբվենցիոն են՝ 48 միլիոն 911 հազար դրամ ընդհանուր արժեքով, 2-ը՝ պետական՝ 1 միլիարդ 490 միլիոն դրամ արժեքով:

Իրականացված ծրագրերի արդյունքում Արեգունիում 2018-2025 թվականների ընթացքում կառուցվել է 2820 մետր խմելու ջրատարի ներքին ու արտաքին ջրատար ցանցեր, 4920 մետր արտաքին լուսավորության ցանց, հիմնանորոգվել 2500 մետր հանրապետական ու ներհամայնքային նշանակության ճանապարհի, ընթացքի մեջ է արդի չափորոշիչներին համապատասխան 144 տեղանոց կրթահամալիրի կառուցումը:

Արեգունու կրթահամալիրը կառուցվում է ՀՀ կառավարության կողմից իրականացվող «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրի շրջանակներում, պետբյուջեի միջոցներով, 1 միլիարդ 210 միլիոն դրամ պայմանագրային արժեքով: Կրթահամալիրի կազմում կլինի նաեւ 80 տեղանոց մանկապարտեզի շենքը:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2024 թվականի հոկտեմբեր ամսից եւ կավարտվեն 2026 թվականի սեպտեմբերին: Շինարարական աշխատանքները 2026 թվականի հուլիսի սկզբի դրությամբ իրականացվել են շուրջ 85 տոկոսով:

Պետական մեկ այլ ծրագրով 2019 թվականին հիմնանորոգվել է Շողակաթ-Վարդենիս հանրապետական նշանակության ավտոճանապարհի՝ Արեգունու վարչական տարածքով ու բնակավայրի ներսով անցնող 2500 մետրանոց հատվածը, շուրջ 280 միլիոն դրամ արժեքով:

«Գեղամա աշխարհ»

ԿԱՐՄԻՐԳՅՈՒՂՈՒՄ 2018-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 13 ԾՐԱԳԻՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ

Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Կարմիրգյուղ գյուղում 2018-2025 թվականների ընթացքում սուբվենցիոն եւ պետական ծրագրերի շրջանակներում իրականացվել է սոցիալ-տնտեսական եւ կենսական նշանակության 12 ծրագիր, որոնց ուղղությամբ կատարված կապիտալ ներդրումները կազմել են 1 միլիարդ 133 միլիոն 825 հազար դրամ:

Ծրագրերից 10-ը սուբվենցիոն են՝ 462 միլիոն 980 հազար դրամ ընդհանուր արժեքով, եւ երկուսը՝ պետական՝ 670 միլիոն 845 հազար դրամ ընդհանուր արժեքով:

Իրականացված ծրագրերի արդյունքում 2018-2025 թվականների ընթացքում Կարմիրգյուղում կառուցվել է 9500 մետր արտաքին լուսավորության ցանց, 8700 մետր խմելու ջրատար ներքին ցանց, 4000 մետր ոռոգման եւ ջրահեռացման ցանց, Գավառի բնության եւ պատմության հուշարձանների գովազդային վահանակներ կրող ավտոսպասարկման կանգառ, հիմնանորոգվել 5729 մետր ներհամայնքային նշանակության ճանապարհ, վերանորոգվել թիվ 2 միջնակարգ դպրոցի շենքը:

Կարմիրգյուղի թիվ 2 միջնակարգ դպրոցի շենքը վերանորոգվել է պետական ծրագրով, «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրի շրջանակներում, պետբյուջեից հատկացված միջոցներով, 387 միլիոն 845 հազար դրամ պայմանագրային արժեքով:

Ծետական մեկ այլ ծրագրով էլ, «Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի» միջոցներով, շուրջ 283 միլիոն դրամ պայմանագրային արժեքով, կառուցվել է 8,7 կիլոմետր երկարության խմելու ջրատար ներքին ցանց:

«Գեղամա աշխարհ»

ԼԱՆՋԱՂԲՅՈՒՐ ԳՅՈՒՂՈՒՄ 2018-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 9 ԾՐԱԳԻՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ

Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Լանջաղբյուր գյուղում 2018-2025 թվականներին սուբվենցիոն ու պետական ծրագրերի շրջանակներում սոցիալ-տնտեսական ու կենսական նշանակության 9 ծրագիր է իրականացվել, որոնց ուղղությամբ կատարված կապիտալ ներդրումները կազմել են 946 միլիոն 16 հազար դրամ:

Իրականացված ծրագրերից 7-ը սուբվենցիոն են՝ 91 միլիոն 16 հազար դրամ ընդհանուր արժեքով, եւ երկուսը՝ պետական՝ 855 միլիոն դրամ ընդհանուր արժեքով:

Իրականացված ծրագրերի արդյունքում Լանջաղբյուրում 2018-2025 թվականների ընթացքում կառուցվել է 5010 մետր խմելու ջրատար, 3120 մետր երկարության ջրանցք ու ոռոգման ջրատար,

2500 մետր արտաքին լուսավորության ցանց, 3126 մետր ջրահեռացման համակարգ, 3424 մետր քառակուսի ասֆալտապատ մայթեր, 1 կամուրջ, հիմնանորոգվել 3180 գծամետր մարզային ու ներհամայնքային նշանակության ճանապարհներ:

Պետական ծրագրերով կառուցվել է Լանջաղբյուրի ջրամբարին մոտեցնող ջրանցքը՝ 130 միլիոն դրամ արժեքով, հիմնանորոգվել Գավառ-Գեղարքունիք ավտոճանապարհի Լանջաղբյուրի հատվածը՝ 725 միլիոն դրամ արժեքով:

«Գեղամա աշխարհ»

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԿԳՈՐԾԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ ԵՐԹՈՒՂԱՅԻՆ ՑԱՆՑ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքում առաջիկայում կգործարկվի միասնական երթուղային ցանց, որի ուղղությամբ արդեն կատարվել են առաջին փուլի ներդրումները եւ տրանսպորտային միջոցների մի մասի ձեռքբերումները:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, ծրագիրն իրականացվում է Մարտունու համայնքապետարանի միջոցների հաշվին, 389 միլիոն դրամ արժեքով:

-Մեկնարկել է նոր տրանսպորտային միջոցների մատակարարումը, եւ ծրագրի առաջին փուլով նախատեսված վեց հարմարավետ «Գազել» միկրոավտոբուսներն արդեն տեղում են: Համայնքի ֆինանսավորմամբ իրականացվող այս խոշոր ծրագրով մինչեւ հուլիսի վերջ ավտոպարկը կհամալրվի եւս 13 «JAC» տիպի միկրոավտոբուսներով, որից հետո Մարտունի-Երեւան, Մարտունի-Վեդի եւ ներհամայնքային բոլոր բնակավայրերի ուղղություններով կմեկնարկեն կանոնավոր, անվտանգ եւ մատչելի ուղեւորափոխադրումները, որոնք շատ կարեւոր ու սպասված ձեռքբերում կլինեն համայնքի ողջ բնակչության համար,- ներկայացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից:

«Գեղամա աշխարհ»

ՄԱՔԵՆԻՍՈՒՄ 2018-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 7 ԾՐԱԳԻՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Մաքենիս գյուղում 2018-2025 թվականներին սուբվենցիոն եւ պետական ծրագրերի շրջանակներում սոցիալ-տնտեսական եւ կենսական նշանակության 7 ծրագիր է իրականացվել, որոնց ուղղությամբ կատարված կապիտալ ներդրումները կազմում են 1 միլիարդ 657 միլիոն 38 հազար դրամ:



Իրականացված ծրագրերից 5-ը սուբվենցիոն են՝ 104 միլիոն 311 հազար 923 դրամ ընդհանուր արժեքով, եւ երկուսը՝ պետական՝ 1 միլիարդ 552 միլիոն 727 հազար դրամ ընդհանուր արժեքով:

Իրականացված ծրագրերի արդյունքում 2018-2025 թվականների ընթացքում Մաքենիսում կառուցվել է 2600 մետր արտաքին լուսավորության ցանց, 800 մետր ոռոգման, 1500 մետր խմելու ջրատար ցանցեր, 800 գծամետր մայթ, 800 մետր ջրահեռացման առուներ, հիմնանորոգվել 1200 գծամետր մարզային ու ներհամայնքային նշանակության ճանապարհ, հանդիսությունների սրահ:

Ընթացքի մեջ է Մաքենիսի կրթահամալիրի կառուցումը ՀՀ կառավարության կողմից իրականացվող ,300 դպրոց, 500 մանկապարտեզ ծրագրի շրջանակներում, 1 միլիարդ 400 միլիոն դրամ արժեքով: Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի մարտ ամսից եւ կավարտվեն 2027 թվականին:

Պետական մեկ այլ ծրագրով հիմնանորոգվել է Ծովակ-Ախպրաձոր ճանապարհի Մաքենիսի հատվածը՝ շուրջ 152 միլիոն 727 հազար դրամ արժեքով:

«Գեղամա աշխարհ»

ԾՈՎԱԿՈՒՄ 2018-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 10 ԾՐԱԳԻՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Ծովակ գյուղում 2018-2025 թվականներին սուբվենցիոն ու պետական ծրագրերի շրջանակներում սոցիալ-տնտեսական ու կենսական նշանակության 10 ծրագիր է իրականացվել, որոնց ուղղությամբ կատարված կապիտալ ներդրումները կազմել են 952 միլիոն 857 հազար դրամ:

Իրականացված ծրագրերից 7-ը սուբվենցիոն են՝ 485 միլիոն 494 հազար դրամ ընդհանուր արժեքով, եւ 3-ը պետական՝ 467 միլիոն 363 հազար ընդհանուր արժեքով:

Իրականացված ծրագրերի արդյունքում 2018-2025 թվականների ընթացքում Ծովակում կառուցվել է 7170 մետր խմելու, 5530 մետր ոռոգման ջրատար ցանցեր, 3700 մետր արտաքին լուսավորության ցանց, 1000 մետր մայթ, խմելու ջրի մատակարարման համակարգը սնուցող աղբյուրակապ, հեղեղատար, հիմնանորոգվել մարզային ու ներհամայնքային նշանակության 5410 գծամետր ճանապարհ:

Պետական ծրագրով 2021 թվականին հիմնանորոգվել է Ծովակ-Ախպրաձոր մարզային նշանակության ճանապարհի՝ Ծովակով անցնող հատվածը՝ շուրջ 356 միլիոն 363 հազար դրամ արժեքով:

«Գեղամա աշխարհ»

14.qxd 04/07/2026 20:00 Page 7

ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

/սկիզբը՝ նախորդ համարներում/

Սիրուն Թեւիկն իր հերթին եւ՛ խանդավառության, եւ՛ չարչարանքների, եւ՛ ծանր վշտերի միջով է անցել: Սակայն բոլոր շրջաններում նա ամենքից տարբեր է եղել, ուրիշ է եղել: Նրա ուրիշությունը նախ նրա ազնվության մեջ է, ապա՝ բարության, նա ուրիշ է եղել իր բնույթով: «Բարի լինել անբարոյական իրականության մեջ,-նկատում է Վ. Գրիգորյանը, - նշանակում է իր վրա վերցնել միջավայրի աղտեղությունների ողջ պատասխանատվությունը»:

Ջանդառի խանդավառության րոպեներին մենք Թեւիկին տեսնում ենք գյուղական ու ընտանեկան գործերին կարծեք թե անմասն, անտարբեր, կոստյումը հագին, միտքը՝ Տաշքենդի ճանապարհին: Նա պատկանում է մարդկանց այն տեսակին, ովքեր սեփական դժբախտության հետ լռությամբ են ապրում: Սիրուն Թեւիկի մասին դժվար է հիշել որեւէ այպանելի, պախարակելի արարք: Եթե նույնիսկ կարելի է, ապա Վարդոն՝ Թեւիկի կինը, այն թողել է անցյալում: Բուն պատմությունն այսպես է եղել. Թեւիկի եղբայր Ակոփը գնացել է պատերազմ ու չի վերադարձել, կինն այրիացել ու որդիները որբացել են: Ընտանիքը ճանապարհել է նաեւ մյուս եղբորը, որից անգամ լուսանկար չի մնացել: Ակոփի լուսանկարի մի օրինակը հիշեցրել է իր մասին, մյուսը՝ եղբոր՝ Մանվելի: Պատերազմող աշխարհը տղամարդկանցից այնպես է աղքատացել, որ այրիացած դաչաղ հարսը պատանի Թեւիկի մեջ իսկական տղամարդու է տեսել, իսկ Օհանը՝ Թեւիկի ավագ եղբայրը, նրանց միասին տեսել եւ համարել է, որ նման բան «չի եղել», երկուսին միմյանցից մահակով զատել, եւ համարել է, որ «սխալ է տեսել»: Դաչաղը փորձել է արդարանալ՝ հիշելով, թե գյուղում ով ում հետ է ճիշտ ճանապարհից թեքվել, թե մեծ տղամարդիկ ջահել աղջիկ են ընտրել, թե ինքը կարող էր երեք որբերին թողնել ու ամուսնանալ, անգամ փորձել է իր անմեղությունը հիմնավորել հարեւան ազգերին հիշելով.«...էդպես ժողովուրդ չկա՞, որ ախպերը զոհված ախպոր կնկան ուզի – հենց իմանաք մի թուրք էլ մենք ենք»: Թեւիկն ընդամենը գնացել է իրեն կանչողի ետեւից: Նրա այդ քայլը գիտակցված չի եղել: Թեւիկն այդ պատմության մեջ «գլխին խփած» երեխա է հիշեցնում, ինչպես նրա մասին հիշատակել է Օհանը:

Պետք է նկատել, որ դարաչու ինքնարդարացման ջանքերը, որքան հեռուն են գնում, այնքան խորքից եւ ամբողջապես են բացահայտվում նոր ժամանակների ապականվող, բարոյալքվող իրականության բոլոր կողմերը: Նա ապրում է այն իրականության մեջ, որի մեջ հայտնվել են ամենքը, եւ հասարակությունը այդ հանգրվանին հասել է ոչ թե այս կամ այն անհատի վարքի ու գործունեության, այլ՝ պատերազմի հետեւանքով: Մարդը կանգ է առել պատերազմի ծնած չարիքների եւ նրա առաջացրած աղետալի հետեւանքների առաջ: Հերոսուհու ինքնարդարացումը նշանակում է, որ հանրության բարոյական արժեքների մեջ տեսանելի փոփոխություններ են տեղի ունեցել: «Հասարակությունը՝ որպես ամբողջական մարմին, - գրում է Վ. Գրիգորյանը, - երկար ժամանակի մեջ ձեւավորել է նորմեր, որոնք նպաստում են դրա կենսագործունեությանը: Տեղի ունեցող կատակլիզմները խաթարում են ոչ միայն տնտեսությունն ու հաշմում են հասարակական օրգանիզմը, այլեւ փլուզում են հարաբերությունները, որոնք մշակվել են դարերի ընթացքում»:

Խաթարված իրականության մեջ, աստիճանաբար բարոյալքվող միջավայրում, մարդն իր առջեւ ծառացած խնդիրները փորձում է լուծել՝ հաշվի չնստելով ազգային եւ կրոնական արմատացած նորմերի հետ: Ազգականների, բարեկամների հետ ամուսնական կապը հայոց մեջ մերժվել է դեռեւս Ներսես Մեծ Կաթողիկոսի (4-րդ դար) ժամանակներից, որի արձագանքները գրի են առնվել հայ մատենագիրների կողմից (Փավստոս Բուզանդ). «...Ամուսնության մեջ լինել օրինավոր, - նշում է Ռ. Նահապետյանը, - չխաբել, միմյանց դեմ դավ չսարքել, հեռու մնալ ազգակցական մերձավոր, խառնակ ամուսնություններից, մանավանդ հարսների հետ մերձավոր կապերից»:

Թեւիկի կյանքի այս դրվագը, ինչպես ասացինք, վկայում է նաեւ ամբողջ հասարակության բարոյական անկման միտումների մասին: Շուշանն իր ժամանակի զոհն է եւ նրա վարքը կրում է նույն ժամանակի կնիքը: Սակայն Շուշանի եւ Թեւիկի միջեւ վաղուց պատահած դիպվածը միակը չէ, որով բացահայտվում է դաչաղի հոգու եւ մտքի հրաժարումը ամուսնու հիշատակի եւ նրա հարազատների նկատմամբ: Պատերազմի օրերից տարիներ են անցել, անցել է եւ խոնարհումը Ակոփի հիշատակի առաջ: Շուշանը՝ «գնացքը սահուն, հասակն ուղիղ, բերանը սեղմած, վշտացյալ աչքերը չոր», ապրում է անհահանջ, չարակամ, իշխանության ձգտող կյանքով: Նա իր մեջ ուժ, կարողություն եւ համառություն է ունեցել միայնակ մեծացնելու երեք երեխաներին եւ հպարտ է դրանով. «Երեք տղես կուշտ ու հագնված, վառելիքս ուրիշի շալակով դռանս բերած դարսած, կովիս խոտը խորոմած դիզած, կարտոլս հանած հորած ու ես էլ Տիգրանի աղջիկ Շուշանն եմ – իմ կյանքի ուղղությունը ուրիշի քոռերը չեն որոշելու» : Շուշանի անցյալը շատերին է հայտնի, ուստի Ակոփի լուսանկարը նոր տան պատին փակցնելը կարող էր զուտ ձեւական բնույթ կրել: Նկարի բացակայությունն իր հերթին կարող էր խոսք ու զրույցի առիթ հանդիսանալ: Առաջին հայացքից թվում է, թե Շուշանը՝ Ակոփի նկարն ունենալու իրավունքը ընտանիքի փոքր որդու մենաշնորհը դարձնելով վերը նշված խնդիրներն է հարթում, մինչդեռ իրականում նրա օջախում լուսանկարն ունենալու անհրաժեշտությունը չկա: Ակոփը Շուշանի անցյալն է, ավարտված պատմություն: Բարոյալքված մի կնոջ համար քիչ հավանական է նկարի պահպանությամբ ավանդականությունը պահպանելու հեռատեսությունն ունենալը: «Նա տեր չի կանգնում նկարին, այլ կերպ՝ ավանդույթին, ընտանեկան սրբությանը, դա միայն ավելորդ բեռ է նրա համար», - կարծում է Վ. Գրիգորյանը:

Շուշանի համար ավելորդ բեռան պես է նաեւ հալիվորը, որի մեջ ամուր արմատներ ունեն ավանդույթները: Քանի դեռ նա երիտասարդների կողքին է, նրանք չեն կարող սրտի ուզածի պես տնօրինել իրենց կյանքը: Այսպես է խորհում Շուշանը, որը կամ ազատություն է ակնկալում՝ սրտի ուզածն անելու համար, կամ մի ողջամիտ խորհուրդ հալիվորներից, որին հետեւելով կարելի է անշեղորեն առաջ ընթանալ:

Մաթեւոսյանի այս ստեղծագործության մեջ Շուշանը այրի կնոջ միանձնյա եւ հավաքական կերպար է, որի մի-

ջոցով հեղինակը միտում ունի ներկայացնելու իր ընտրած ժամանակամիջոցում եւ կենսական պայմաններում միայնակ կնոջ դժբախտությունը: Այրի կնոջ կյանքը առհասարակ դյուրին լինել չէր կարող, իսկ Շուշանի պարագայում ծանրակշիռ գործոն է նաեւ տարիքը: Նրա ծաղկուն հասակը դժվարությամբ կհաշտվեր տղամարդու բացակայության հետ, եթե դրան էլ գումարենք այն, որ նա ի բնե չար էր, ապա արդյունքում տեսանելի կդառնա հերոսուհու ամբողջական կերպարը: Շուշանի չարությունը խորացրել էին նաեւ ծանր ժամանակները, նահապետական գյուղը, որի հետ նա անհաշտ էր: Շուշանն իր հերթին չարություն էր սերմանել իր երեխաների մեջ, ինչը անհետեւանք մնալ չէր կարող:

Մի անգամ Շուշանը համարձակվում է զավակների առաջ աներկմտանք հայտարարել, որ Նիկալն այլեւս նրանց պապը եւ Փառոն էլ նրանց տատը չէ, որ նրանց տանն այլեւս ոչինչ եղբայրներին չի պատկանում, որ նրանք այլեւս Մելիքյան են եւ միայն իրենից են ծնվել: Չարության սերուցքով սնված երեխաները մորը չեն զիջում եւ խոսքից գործի են անցնում՝ դիմելով դաժան արարքների. ջրում խեղդում են սպիտակ ուլին, որը Ակոփի ու Մանվելի խորհրդանիշ-մատաղացուն էր, մասնակի կտրում, օճառաջրով հագեցնում են սեփական բակի բերքատու խնձորենին, որը Նիկալը տարիներ առաջ Ակոփի անունով էր պատվաստել, Ակոփի նկարը պատից պոկում, հորում են հողի մեջ: Այդ ամենից տեղյակ Թեւիկը Շուշանի առաջ կանգնում է «մորթելու պատրաստ մատաղի գառան պես»:

Շուշանը խոնարհվող տեսակ չէ: Վարդոյից հետո տան շեմքը հատած Թեւիկի նորատի կինը ընտանիքում սեր ու պատշաճ ընդունելություն չի գտնում, սակայն այդ Շուշանն է, որ հանդգնում է նորահարսի անելիքը ուղիղ նրա ճակատին ասել. «Հիմար ու հպարտ, որ որդիները աշխարհը կառավարում են, սեւ դարաչին ձեռքով ասել էր՝ գնա՛, թաքուն հասկացրել էր, որ գործը վճռված է»:

Այս իրողությունը մեզ համար բացահայտում է Մաթեւոսյանի՝ հայոց մեջ ազնվականության անկման տենդենցների արտացոլումը: Իրականությունը, այո՛, բազմադիմի է, պատերազմը, այո՛, լի է չարիքներով, եւ իրավամբ Շուշանի շուրջ ծավալվող իրադարձությունները, նրան բարոյական անկման տանող գործոնները բազմաթիվ են եւ ծանրակշիռ: Սակայն բարոյական նորմերը, որոնք հազարամյակների ծնունդն էին, նույնպես մեծ աղետների միջով են ուղեկցել այն մարդկանց, ովքեր իրական բարոյականությունը փոխանցել են նոր ժամանակների դարաչիներին, Թեւիկներին եւ Ջանդառներին: Այն նույնպես խոցելի է եղել ժամանակի մարտահրավերների առաջ, բայց չի խոցվել:

Կյանքի տարբեր խառնարաններով է անցել նաեւ Օհանը՝ նույն ընտանիքի անդամներից մեկը, նա, որ այնքան անցանկալի իրադարձությունը տեսել է, սակայն համարում է, որ սխալ է տեսել, դառնորեն գիտակցում է, որ նման բան եղել է, սակայն նրա մարդկային տեսակը հայրերից ու պապերից նրան փոխանցված ավանդական որակները թույլ չեն տալիս մտածել անգամ իր տեսածի մասին: Փոխարենը նա գտնում է Թեւիկին «բուժելու» ուղին. իր հետ տանում է սար եւ ողջ ճանապարհին հանդիմանում, ավագ եղբոր իր դիրքերից մատնացույց է անում կրտսերի տեղն ու կարելիի սահմանը: Թեւիկը գնում է Օհանի ձիու ետեւից, ինչպես «մի վիրավոր շուն» կամ՝ «տրորված ծաղիկ», գնում է, որպեսզի Օհանն իր հասակը շտկի: Օհանին շրջապատող սարվորները, մարդիկ, ովքեր հարգանքով էին վերաբերվում Օհանին, գյուղի իրադարձություններին քաջատեղյակ լինելով, լռում են Օհանի առաջ:

Պատահական չէ, որ Օհանի մասին խոսելիս Մաթեւոսյանը նրան «սարերի թագավոր մեր ախպեր» է անվանում: Այս հանգամանքը մի կողմից ընդգծում է նրա գործունյա բնույթը, մյուս կողմից՝ մարդկանց հարգանքին, մեծարանքին արժանի լինելը: Սա վերստին ապացուցում է, որ այս երկում ավանդականության պահպանողներից մեկն էլ Օհանն է: Նրա ձեռքում մի կողմից ավագի իրավունքն է, մյուս կողմից հասարակության ըմբռնումը այդ իրավունքի նկատմամբ: Օհանի ազնիվ հեղինակությունը հասարակության մեջ, նրա հանդեպ հարգալից վերաբերմունքը արտահայտվում է նաեւ մի պարզ նախադասությամբ՝ «Նրա հարգանքի առաջ մեզանից ոչխա՞ր տանեին, իրենց օտար դռներին մեզ երեք օրվա գերի՞ պահեին»:

Ակոփը, Մանվելը, Օհանն ու բազմաթիվ այլ մարդիկ զոհվել ու ոչխարների պատմության, Թեւիկի հետ պատահած դիպվածի հետ մեկտեղ մնացել են անցյալում: Արդեն հասուն տարիքում Թեւիկի բախտի անիվն ուղիղ ճամփով է ընթացել. երիտասարդ կինը՝ Վարդոն, սիրել է նրան, հեռու է պահել տան ու հանդի գործերից: Վարդոն տղամարդու պես գնացել է խոտհնձի, ինքն է եղել տան տիրոջ եւ տան ծառայի ծանր դերերում, սակայն այդ մասին իմացել են իրենք՝ ամուսիններն ու ամենամտերիմները: Վարդոն մտերմաբար ծիծաղել է ամուսնու չարչարանքների, խոտհունձի մեջ մղվող նրա պայքարի վրա, իսկ Թեւիկը ճանաչել է նրա հարազատությունը եւ երբեք չի նեղացել նրանից. «...Վարդոն ծիծաղում էր, ինչպես որ մայրը իր երեխայի վրա սիրելով ծիծաղի, ու Թեւիկի չարանալն էլ՝ ինչպես որ երեխան ետ դառնա ու մոր առաջ լեզու պտտի»: Նա եւ՛ սեր ու հոգածություն, եւ՛ իշխանություն է ունեցել ամուսնու վրա: Խոտհնձին մասնակից մյուս կանանց հետ Վարդոն իրեն թույլ է տվել խմել, մինչդեռ ամուսնուն՝ միայն բաժակաճառ ասել, որից հետո խմիչքը վերցրել է նրա ձեռքից:

«Ամուսնու ձեռքից բաժակն առնելու այդ արարքը օտար աչքի ներկայությամբ Վարդոն իրեն թույլ չէր տալիս, միայն՝ երբ այսպես մենք ու մենք էինք լինում»,-ընդգծում է հեղինակը:

/շարունակելի/

Ռուզան Վարդանյան

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻՑ 303 ԵՐԵԽԱ ՀԱՆԳՍՏԻ Է ՄԵԿՆԵԼ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՄԱՌԱՅԻՆ ՃԱՄԲԱՐ

Հունիսի 20-ից Գեղարքունիքի մարզից ամառային հանգստի ճամբար են մեկնել 303 երեխա:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմից, դպրոցականները կհանգստանան Հանքավանի «Հասմիկ» եւ «Լուսաբաց» ճամբարներում՝ 2 հերթափոխով, 10-ական օրով:

Առաջին հերթափոխի հանգիստը, Գեղարքունիքի մարզի տարբեր համայնքներից մեկնած 303 երեխայի համար կավարտվի հունիսի 29-ին, իսկ 2-րդ հերթափոխի ժամկետ սահմանվել է հունիսի 29-ից հուլիսի 8-ը:

Գեղարքունիքի մարզի դպրոցականների ամառային հանգստի կազմակերպման նախապատրաստական աշխատանքներն իրականացվում են Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի եւ մարզի համայնքապետարանների կողմից:

ՀՀ կառավարության կողմից իրականացվող ծրագրից օգտվում են զոհված, հաշմանդամություն ձեռք բերած, հաշմանդամություն ունեցող

զինծառայողների եւ աշխարհազորայինների, ծնողազուրկ, ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ու անապահովության 0-ից բարձր միավոր ունեցող, անապահովության գնահատման կարգով սոցիալապես անապահով ճանաչված եւ ընտանիքի մեկ հաշվարկային անդամի ամսական եկամտի չափը «Պետական նպաստների մասին» օրենքով եւ ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված կարգով անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմի 185 տոկոսի արժեքից ցածր եկամուտ ունեցող ընտանիքների, ինչպես նաեւ՝ ազգային փոքրամասնությունների ընտանիքների 7-13 տարեկան դպրոցահասակ երեխաներ:

Հունիսի 29-ին Գեղարքունիքի մարզից ամառային հանգստի ճամբարներ են մեկնել երկրորդ հերթափոխի երեխաները

Գեղամա աշխարհ

14.qxd 04/07/2026 20:00 Page 8

ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔՈՒՄ ԿԳՈՐԾԻ ԱՐԴԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ



Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքում, Գեւորգ Չիրոյան փողոցում գտնվող նախկին ատամնաբուժարանի շենքի տարածքում, հիմնվում է արդի չափորոշիչներին համապատասխան Երիտասարդական կենտրոն, որի շինարարական աշխատանքները մեկնարկել եւ ընթանում են 2026 թվականի ապրիլ ամսից:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, ծրագիրն իրականացվում է Գերմանական միջազգային համագործակցության ընկերության հետ համագործակցությամբ: Ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է շուրջ 52 միլիոն դրամ, որից 30 միլիոն դրամը հատկացրել է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերությունը, 22 միլիոն դրամը՝ Մարտունու համայնքապետարանը: Շենքը հիմնանորոգվում է 162 քառակուսի մետր տարածքում, որից հետո կահավորվելու եւ ապահովվելու է արդի չափորոշիչներին համապատասխան բոլոր պայմաններով: Աշխատանքները նախատեսվում է ավարտել այս տարվա օգոստոսին:

-Սա երկար սպասված ու կարեւոր ձեռնարկ էր, որի արդյունքում վերջապես Մարտունի համայնքի երիտասարդությունը կունենա միջոցառումների, հանդիպումների, քննարկումների, ազատ ժամանցի համար բավարարող բոլոր պայմաններն ու հնարավորությունները,- ներկայացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից:

«Գեղամա աշխարհ»

ԳԱԳԱՐԻՆՈՒՄ ԲԱՑՎԵԼ Է ԱՐՑԱԽՅԱՆ ՎԵՐՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԱՆՄԱՀԱՅԱԾ ՀԵՐՈՍՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՊՈՒՐԱԿ



Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի Գագարին բնակավայրի Բաղրամյան 3 շենքի բակում կառուցվել է պուրակ՝ նվիրված Արցախյան 44-օրյա պատերազմի անմահ հերոսներին:

Պուրակի գաղափարը ծնունդով գագարինցի, ՌԴ-ում բնակվող Նորայր Պողոսյանինն է, որը կյանքի է կոչվել հայրենի բնակավայրում՝ Հարություն Ավանեսյանի եւ համախոհների միջոցով:

Գագարին բնակավայրը 44-օրյա պատերազմում ունեցավ յոթ թանկ կորուստ, որոնց հիշատակը հավերժացվել է նաեւ 2021թվականին: Երախտապարտ գագարինցին՝ ի դեմս Ավանեսյանների ընտանիքի, նախաձեռնեց եւ իրականացրեց աստվածահաճո ու սպասված ձեռնարկ: Գագարինի Գայի 1 շենքի բակային տարածքում գագարինցիներին եւ հյուրերին դիմավորում է հուշախաչքարաղբյուրը՝ ,պատմելով Տիգրան Ղարիբյանի, Ալիկ Պետրոսյանի, Հարություն Ռաֆայելյանի, Ռադիկ Թորոսյանի, Հովիկ Վերանյանի, Արթուր Վիրաբյանի, Լեռնիկ Վերանյանի սխրանքի մասին, փոխանցելով հայրենասիրության յուօրինակ դասեր:

Իսկ երկրորդ ձեռնարկով Գագարինում ավելացավ եւս մեկ պուրակ, որը ոչ միայն բարեսիրական գաղափարի ծնունդ է, այլ նաեւ հարգանքի տուրք անմահ հերոսներին եւ հիշողության լավագույն վայր:

Արմինե Ղուկասյան

ԳԱՎԱՌԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՍԱՆԸ ՀԱՂԹԵԼ Է ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈՒԼՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի նկարչական խմբակի սան Աստղիկ Խաչատրյանը հաղթող է ճանաչվել միջազգային մրցույթի հանրապետական փուլում:

Գավառի Մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի «Նկարչության» եւ «Ձեռարվեստի» խմբակների սաները, խմբակավարներ Գոհար Բալաբեկյանի եւ Շուշան Աչիկյանի ղեկավարությամբ մասնակցել են ՀՀ ԿԳՄՍ նախարարության եւ «Արհեստագործների» միության կողմից կազմակերպված «Խաղաղություն» միջազգային 2-րդ մրցույթ-ցուցահանդեսին՝ ներկայացնելով աշխատանքներ, որոնք պատկերել են խաղաղության գաղափարը:

Մրցույթի արդյունքում կենտրոնի ,Նկարչությանե խմբակի սան Աստղիկ Խաչատրյանը, խմբակավար՝ Գոհար Բալաբեկյան, մրցույթի եզրափակիչ փուլի մասնակցության հնարավորություն է ստացել՝ դառնալով հանրապետական փուլի հաղթող: Մյուս մասնակիցներն արժանացել են վկայականների:

Կենտրոնի տնօրինության նախաձեռնությամբ կազմակերպվել է վկայականների հանձնման հանդիսավոր արարողություն, որտեղ մրցույթի մասնակից եւ կենտրոն հաճախող սաների ծնողները ծանոթացել են մրցույթին ներկայացված եւ ամբողջ ուսումնական տարվա ընթացքում կատարված աշխատանքներին:

Ալվարդ Մանուկյան

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՀԱՎԱՍՏԱԳՐՎԱԾ ՍԵՐՄԵՐՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇՆԱՆԱՑԱՆԻ ԴԻՄԱՑ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿՏՐՎԻ 672 ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄԻ ՓՈԽՀԱՏՈՒՅՈՒՄ

Գեղարքունիքի մարզի երկրագործական 1385 տնտեսություն 2025 թվականի աշնանը հավաստագրված սերմերով կատարած աշնանացանի դիմաց պետության կողմից կստանան 672 միլիոն դրամ:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի պահպանության վարչությունից, 2025 թվականին Գեղարքունիքի մարզի տնտեսություններում կատարվել է 14652 հեկտար աշնանացան ցորենի ցանք, որից 8400 հեկտարը՝ հավաստագրված սերմերով: Պետության կողմից տրվող բուսաբուծության աջակցության ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր հեկտարի դիմաց կտրվի փոխհատուցում՝ 80 հազար դրամի չափով:

Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի պահպանության վարչության կողմից արդեն ավարտվել են ընտրանքային մոնիտորինգի աշխատանքները եւ արդյունքները ներկայացվել են ՀՀ էկոնոմիկայի նապխարարություն՝ համապատասխան վճարումներ կատարելու համար:

-Մեր կողմից կատարված դիտարկումները ցույց են տալիս, որ Գեղարքունիքի մարզում կատարված աշնանացան հացահատիկի ցանքերը, 14652 հեկտարի չափով, հիմնականում հաջող են ձմեռել եւ կենսունակ են հետագա աճի ու զարգացման համար,-հավաստեցին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի պահպանության վարչությունից:

«Գեղամա աշխարհ»

ԱՎԱՐՏՎԵԼ Է ՍԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿՈՄԻՏԱՍ ՓՈՂՈՑԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄԸ

Գեղարքունիքի մարզի Սեւան քաղաքի Կոմիտաս փողոցում արդեն ավարտվել են հիմնանորոգման աշխատանքները, որոնք իրականացվում էին ՀՀ կառավարության կողմից իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում:

Կոմիտաս փողոցի հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 29 միլիոն 484 հազար 590 դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը Սեւանի համայնքապետարանը:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2026 թվականի ապրիլից եւ հունիսի 23-ի դրությամբ գտնվում են ավարտական փուլում:

Ծրագրի իրականացման արդյունքում Կոմիտաս փողոցի մայթերն ու ճանապարհի երթեւեկելի մասն ասֆալտապվել են 220 գծամետր երկարությամբ:

Ծրագրի իրականացման արդյունքում

Կոմիտաս փողոցում ասֆալտապատման ծրագրի իրականացումն առաջնահերթություն էր, որն այլեւս իրողություն է եւ ապահովում է տարածքի անվտանգ եւ ներկայանալի տեսքը:

Այս ենթածրագրի իրականացմամբ Սեւան քաղաքում ավելանում է հիմնանորոգված փողոցների ցանկը:

Արմինե Ղուկասյան

ՆՈՐԱՏՈՒՍՈՒՄ 2018-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 14 ԾՐԱԳԻՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ

Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Նորատուս գյուղում 2018-2025 թվականների ընթացքում սուբվենցիոն եւ պետական ծրագրերով իրականացվել է սոցիալ-տնտեսական եւ կենսական նշանակության 14 ծրագիր, որոնց ուղղությամբ կատարված ներդրումների ընդհանուր գումարը կազմել է 742 միլիոն 355 հազար դրամ:

Իրականացված ծրագրերից 11-ը սուբվենցիոն են՝ 345 միլիոն 755 հազար դրամ արժեքով, եւ 2-ը պետական՝ 396 միլիոն 600 հազար դրամ արժեքով:

Իրականացված ծրագրերի արդյունքում 2018-2025 թվականների ընթացքում Նորատուսում կառուցվել է 10700 մետր լուսավորության ցանց, 2 մանկական խաղահրապարակ, Գավառի պատմության ու բնության հուշարձանների պատկերով գովազդային վահանակներ կրող ավտոսպասարկման կանգառ, համայնքապետարանի վարչական շենք, ոռոգման եւ ջրահեռացման համակարգ, հիմնանորոգվել 3078 մետր ներհամայնքային նշանակության ճանապարհ:

Պետական ծրագրի շրջանակներում, 360 միլիոն դրամ արժեքով, 2025-2026 թվականների ընթացքում վերանորոգվել եւ արդիականացվել է Նորատուսի թիվ 1 միջնակարգ դպրոցի շենքը, 36 միլիոն 600 հազար դրամ արժեքով էլ կենտրոնացված ջեռուցման համակարգ է կառուցվել Նորատուսի թիվ 2 միջնակարգ դպրոցում:

«Գեղամա աշխարհ»

ԳԵՂԱՄԱ աշխարհ

Լրատվական գործունեություն իրականացնող «Գեղարքունիք» թերթի խմբագրություն» ՓԲԸ: Հասցեն՝ ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7
էլ.հասցե՝ khosrov1@yandex. ru
Գլխավոր խմբագիր՝ Խոսրով Խլղաթյան
հեռ. բջջ. 094022692

Վկայական՝ 02 Ա 050560: Գրանցման համարը՝ 25.120.00834: Տրված 07.05.2001թ.: Տպաքանակը՝ 1000: Ծավալը՝ 2 մամուլ: Թողարկման օրը՝ 03. 07. 2026 թ.:
Տպագրվում է «Հայկարլի» ՓԲԸ տպարանում:
«Գեղամա աշխարհ» թերթի բոլոր համարներին կարող եք ծանոթանալ https://tert.nla.am կայքում: